

PARLIAMENT MONITORING

5-րդ գոխարսան ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ | ԹԵՄԱՏԻԿ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



«ՄԱՆԴԱՏ» Իրեթեկաբովական հասարակական կազմակերպություն

5-րդ գումարման Ազգային ժողով. մեծամասնական ընտրակարգ

Չեկոյցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամեր - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N 19409: Չեկոյցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամեր – Հայաստան կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

ԵՐԵՎԱՆ 2016

Նախաբան

«Աժ մոնիտորինգ» ծրագիրը 2012 թվականից դիտարկում է 5-րդ գումարման խորհրդարանի աշխատանքը՝ ուշադրության առանցքում պահելով Ազգային ժողովի օրինաստեղծ և վերահսկողական գործառույթների իրացումը, Աժ խմբակցությունների ու պատգամավորների գործունեությունը, հանձնաժողովների աշխատանքը, պատգամավորների բացակայություններին ու էթիկայի հարցերին առնչվող խնդիրները: Դիտարկման արդյունքները յուրաքանչյուր նստաշրջանի ավարտից հետո ամփոփվել են զեկույցներով ու ներկայացրել, թե ինչպես է ՀՀ օրենսդիր մարմինն իրացրել Սահմանադրությամբ իրեն վերապահված հիմնական գործառույթները:


2017թ. 5-րդ գումարման Ազգային ժողովն ավարտում է իր գործունեությունը: 2017թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ «Աժ մոնիտորինգ» ծրագիրն ամփոփում է հնգամյա դիտարկման արդյունքներն ու 5-րդ գումարման խորհրդարանի գործունեությունը ներկայացնում՝ ըստ մշտադիտարկման հիմնական ուղղությունների:

Ներկայացվող զեկույցում ամփոփվել են Աժ մեծամասնական պատգամավորների գործունեության դիտարկման արդյունքները: Կարևորելով Ազգային ժողովի ներկայացուցչական գործառույթի պատշաճ իրացումը, նկատի ունենալով, որ Ազգային ժողովի մոտ 1/3-ը կազմող մեծամասնական հատվածն է ապահովում օրենսդիր մարմին-ընտրող ուղիղ կապը և հաշվի առնելով, որ սահմանադրական փոփոխություններից հետո մեծամասնական ընտրակարգը դե յուրե դադարում է գոյություն ունենալ՝ «Աժ մոնիտորինգը» ամփոփել է խորհրդարանի մեծամասնական ընտրակարգով ընտրված 41 պատգամավորների գործունեության ընդհանուր պատկերը, նրանց աշխատանքի հիմնական ցուցանիշները և այս հատվածի ազդեցությունն ու կշիռն օրենսդիր մարմնի ընդհանուր գործունեության մեջ:

Ընտրողներին ինչ են խոստացել մեծամասնական ընտրակարգով 2012թ. խորհրդարան եկած պատգամավորները, ինչպես են կատարել իրենց խոստումները, ակտիվության, նախաձեռնողականության ինչ ցուցանիշներ են արձանագրել: Ծրագիրը խնդիր է ունեցել ներկայացնել այս հարցերի պատասխանները՝ համադրելով մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների ծրագրային հիմնադրույթները, դրանց իրականացման կամ չիրականացման վերաբերյալ նրանց մեկնաբանությունները և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական տվյալները: Առավել ամբողջական պատկեր ունենալու նպատակով ամփոփումները լրացվել են մարզերից ստացված գնահատականներով. հարցումներն իրականացվել են մարզային ՀԿ-ների միջոցով:

5-րդ գումարման Ազգային ժողով. մեծամասնական ընտրակարգ

2015թ. սահմանադրական փոփոխությունների համաձայն՝ ՀՀ օրենսդիր մարմինն այսուհետ կձևավորվի 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգով: 5-րդ գումարումն, այսպիսով, Հայաստանի նորագույն պատմության մեջ կդառնա խառը ընտրակարգով ձևավորված վերջին խորհրդարանը, որտեղ պատգամավորների մոտ մեկ երրորդն ընտրվել է մեծամասնական ընտրակարգով:




Խորհրդարանի մեծամասնական հատված. ընդհանուր նկարագիր

Ըստ կուսակցական պատկանելության. 5-րդ գումարման Ազգային ժողովում 41 պատգամավորից 30-ը «Հանրապետական» խմբակցության անդամ է: Նրանցից անկուսակցական է 5-ը՝ Սամվել Ալեքսանյան, Արկադի Համբարձումյան, Մարինե Մարաբյան, Գարեգին Նուշիկյան, Սեդրակ Սարոյան:

8 մեծամասնական պատգամավոր Ազգային ժողովի ընտրություններին մասնակցել է որպես «Բարգավաճ Հայաստան» կուսակցության թեկնածու և ընտրվելուց հետո մինչև 2015թ. փետրվարն անդամակցել ԲՀԿ խմբակցությանը: Նրանցից 4-ը եղել է անկուսակցական: 4-ից 3-ը (Գրիգորի Մարգարյան, Դավիթ Բոչարյան, Մուշեղ Պետոյան) Գագիկ Ծառուկյանի՝ քաղաքականությունը թողնելու մասին հայտարարությունից և ԲՀԿ նախագահի փոփոխությունից հետո դուրս են եկել խմբակցությունից: Մարտուն Գրիգորյանը մտացել է խմբակցության կազմում՝ շարունակելով նախագահել գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովը (պաշտոնը ստացել է ԲՀԿ-ի քվոտայով): Մյուս 4-ը ԲՀԿ խմբակցության անդամ են միայն ֆորմալ առումով (կուսակցական լինելու հանգամանքը նրանց թույլ չի տալիս դուրս գալ խմբակցությունից՝ պարտադրելով այդ պարագայում հրաժարվել նաև մանդատից): Ըստ ելության՝ որպես «Բարգավաճ Հայաստան» կուսակցության թեկնածու մանդատ ստացած 8 մեծամասնականներից գումարման ավարտին կուսակցության հետ առնչություն ունի միայն մեկը՝ Լյովա Խաչատրյանը:

41 մեծամասնականներից 3-ն անկուսակցական է և որևէ խմբակցությունում ընդգրկված չէ: Նրանք են Արայիկ Գրիգորյանը, Էդմոն Մարությանը, Կարեն Բոթոյանը: Վերջինը 2012թ-2014թ. մայիս եղել է ՕԵԿ խմբակցության անդամ: Խմբակցությունից դուրս է եկել կուսակցության՝ ընդդիմություն դառնալուց հետո:



Մեծամասնական պատգամավորներն՝ ըստ կուսակցական պատկանելիության

- ՀՀԿ
- ԲՀԿ
- Խմբակցություններում չընդգրկված

Ըստ սեռի և տարիքի. Մեծամասնական ընտրակարգով ընտրված 41 պատգամավորներից միայն 2-ն են կանայք՝ Մարինե Մարաբյանը թիվ 40 և Կարինե Պողոսյանը թիվ 17 ընտրատարածքից: Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներից ամենաերիտասարդը Հայկ Գրիգորյանն է, ավագը՝ Աշոտ Աղաբաբյանը:

5-րդ գումարման Ազգային ժողովի 41 մեծամասնականների մեծ մասը պատգամավոր է ընտրվել մի քանի անգամ: Կարեն Կարապետյանը (թիվ 32 ընտրատարածք) եղել է 5 գումարումների Ազգային ժողովի պատգամավոր, 4 անգամ ընտրվել է մեծամասնական ընտրակարգով: Հրանտ Գրիգորյանը (թիվ 20 ընտրատարածք), Հակոբ Հակոբյանը (թիվ 24 ընտրատարածք), Մանվել Բաղդեյանը (թիվ 22 ընտրատարածք) պատգամավոր են ընտրվել 4-ական անգամ:


Գործող խորհրդարանի 41 մեծամասնական պատգամավորներից 3-ն ընտրվել է լրացուցիչ ընտրությունների արդյունքում:

- ԲՀԿ-ական Սամվել Բալասանյանի՝ Գյումրիի քաղաքապետ դառնալուց հետո 2015թ. դեկտեմբերին թիվ 35 ընտրատարածքում պատգամավոր է ընտրվել ՀՀԿ-ական Արման Սահակյանը:
- ՀՀԿ-ական Վահե Հակոբյանի՝ Սյունիքի մարզպետ նշանակվելուց հետո 2013թ. սեպտեմբերին թիվ 38 ընտրատարածքից պատգամավոր է ընտրվել ՀՀԿ-ական Արմեն Կարապետյանը:
- ՀՀԿ-ական Ռուբեն Հայրապետյանի՝ մանդատից հրաժարվելուց հետո 2012թ. դեկտեմբերին թիվ 1 ընտրատարածքում պատգամավոր է ընտրվել ՀՀԿ-ական Ռոբերտ Սարգսյանը:

5-րդ գումարման ավարտին Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները 40-ն են՝ 41-ի փոխարեն: Թիվ 22 ընտրատարածքից մեծամասնական ընտրակարգով ընտրված Մանվել Բաղդեյանը նստաշրջանի ավարտին նշանակվել է ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Քուվեյթում: Նրա մանդատը մինչ հաջորդ ընտրություններ կմտա թափուր. գործող օրենսդրական կարգավորումները խորհրդարանի գործունեության վերջին տարում արգելում են մեծամասնական ընտրատարածքներում նոր ընտրության անցկացումը մինչև Ազգային ժողովի հաջորդ ընտրություններ:

Օրենսդրական ակտիվություն

- 5-րդ գումարման Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրված 41 պատգամավորից միայն 15-ն են գումարման 9 նստաշրջանների ընթացքում հարց տվել և ելույթ ունեցել: Մեծամասնականների մոտ 2/3-ը կամ 41-ից 25-ը ԱԺ 5-րդ գումարման 9 նստաշրջանների ընթացքում ոչ մի հարց չի տվել, ոչ մի ելույթ չի ունեցել:



Մեծամասնական պատգամավորներ մասնակցությունը օրենսդրական քննարկումներին


- Զեմարկումների չեն մասնակցել
- Զեմարկումների մասնակցել են

- Ըստ հարցերի և ելույթների վիճակագրության՝ առաջատարը թիվ 30 ընտրատարածքից ընտրված Էդմոն Մարությանն է (125 հարց, 95 ելույթ): Երկրորդը թիվ 8 ընտրատարածքից ընտրված հանրապետական Կորյուն Նահապետյանն է (43 հարց, 28 ելույթ), երրորդը՝ թիվ 2 ընտրատարածքից ընտրված Սամվել Ֆարմանյանը (28 հարց, 29 ելույթ)¹:

¹ Վիճակագրությունն ամփոփում է 5-րդ գումարման Ազգային ժողովի առաջինից իններորդ նստաշրջանների տվյալները:

Օրենսդրական Նախաձեռնություններ

- Մեծամասնական ընտրակարգով ընտրված 41 պատգամավորներից 18-ն են գումարման ընթացքում հանդես եկել օրենսդրական նախաձեռնություններով կամ եղել համահեղինակ որևէ օրինագծի: 23 պատգամավոր օրինաստեղծ գործընթացին չի մասնակցել:



- Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներից օրենսդրական նախաձեռնողականությամբ ընդգծված առաջատարը Էդմոն Մարությանն է: Նա հեղինակել է 36 նախագիծ (24-ը՝ միայնակ, 12-ը՝ համահեղինակությամբ): Գումարման ընթացքում ընդունվել է Մարությանի հեղինակած միայն 1 նախագիծ: 21-ն ընդգրկվել է օրակարգ, մյուսները շրջանառության մեջ են (նախագծերը հիմնականում վերաբերում են իրավական ոլորտին):
- Էդմոն Մարությանից բացի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրված միայն 1 պատգամավոր է միայնակ օրենքի նախագիծ հեղինակել. Զակոբ Զակոբյանը (թիվ 24 ընտրատարածք) փոփոխություն է առաջարկել «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում: Նախագիծն ընդունվել է:

- Փոխարենը մեծամասնականների շարքերում շատ են համահեղինակ պատգամավորները: Կարինե Պողոսյանը համահեղինակ է 9, Մնացական Մնացականյանը՝ 7, Կորյուն Նահապետյանը՝ 4, Սամվել Ֆարմանյանը՝ 3 օրենքի նախագծի: Ուշագրավ է, որ որպես համահեղինակներ հանդես են եկել նաև օրինաստեղծ գործունեության որևէ դրսևորմամբ աչքի չընկած պատգամավորները: Արտակ Սարգսյան, օրինակ, համահեղինակ է 2 նախագծի, որոնցից մեկը վերաբերում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքին, մյուսը, համահեղինակած Արթուր Ստեփանյանի հետ, փոփոխություն է առաջարկվում Քաղաքացիական օրենսգրքում:
- ՀՀԿ-ն ներկայացնող մեծամասնական պատգամավորներ Արման Սահակյանն ու Սամվել Ֆարմանյանը «Գովազդի մասին» եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքներում կատարված փոփոխությունների (21.06.2014թ.) հեղինակներից են: Փաթեթով հանվեց թունդ ալկոհոլային խմիչքների հեռուստագովազդի արգելքը գիշերային ժամերին: Ըստ հիմնավորման՝ օրինագծի ընդունումից հետո հայաստանյան հեռուստաընկերությունները ալկոհոլային խմիչքներ ներմուծող ընկերություններից կարող էին ստանալ տարեկան մինչեւ լրացուցիչ 1 մլրդ դրամ: Նախագծի հեղինակներից Արման Սահակյանի անունը կապվում է ալկոհոլային խմիչքների ներմուծման բիզնեսի հետ, իսկ Սամվել Ֆարմանյանն ուղիղ առնչություն է ունեցել որոշ լրատվամիջոցների գործունեությանը:
- Սեդրակ Սարոյանը, Մանվել Գրիգորյանը և Սամվել Ֆարմանյանը միասին հեղինակել են «Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագիծը:

Դրամական միջոցներ, եկամուտներ

5-րդ գումարման Ազգային ժողովի ամենահարուստ 10 պատգամավորներից 9-ն ընտրվել է մեծամասնական ընտրակարգով: Խորհրդարանի 16 դուլարային միլիոնատերերից 12-ը մեծամասնական պատգամավոր է:

Ըստ դրամական միջոցների. 2015թ. վերջի դրությամբ ամենից շատ դրամական միջոցներ հայտարարագրել է Գագիկ Ծառուկյանը՝ ընդհանուր առմամբ հայտարարագրել է 16 մլրդ 626 մլն դրամ, դուլարային արտահայտությամբ՝ 34 մլն 369.9 հազ. դուլար: Դրամական միջոցներով երկրորդը Սամվել Ալեքսանյանն է՝ ընդհանուր 4 մլրդ 265.7 մլն դրամ (8.8 մլն դուլար), երրորդը՝ Գրիգորի Մարգարյանը՝ 2 մլրդ 504.2 մլն դրամ (5 մլն 176.7 մլն դուլար):

	Ընդամենը դրամական միջոցներ					
ԱՆՈՒՆ ԱՉԳԱՆՈՒՆ	Դրամային արտահայտությամբ			Դոլարային արտահայտությամբ		
ՃԱՌՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ ԿՈՆՑԱՅԻ	16 625 977 270,0	34 368 945,3	157 810 000,0	19 717 000,0	13 108 000,0	0,0
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄԿԵԼ ԼԻՄԻՆԴՐԻ	4 265 572 000,0	8 817 719,9	347 197 000,0	8 100 000,0	0,0	0,0
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ	2 504 256 250,0	5 176 757,1	2 110 000 000,0	815 000,0	0,0	0,0
ՀԱԿՈՔՅԱՆ ՀԱԿՈՔ ԳԱՌՆԻԿԻ	2 446 045 561,3	5 056 424,9	2 060 000 000,0	798 027,0	0,0	0,0
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ ԹԵՍՈՒՐԻ	2 395 343 750,0	4 951 615,0	1 918 850 000,0	985 000,0	0,0	0,0
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՇՈՏ ԵՂԻՇԵԻ	2 035 000 000,0	4 206 718,3	100 000 000,0	4 000 000,0	0,0	0,0
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՀԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ	1 606 297 320,0	3 320 511,3	426 000 000,0	2 300 000,0	128 000,0	0,0
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ ՍԱՄԿԵԼԻ	1 136 665 767,5	2 349 696,7	1 075 843 880,0	125 730,0	0,0	0,0
ԲԱԴԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՀԵՆՐԻԿԻ	1 107 241 350,0	2 288 871,0	300 000 000,0	1 625 000,0	40 000,0	0,0
ԳՈՒԼՈՅԱՆ ՄՈՒՐԱԴ ԱՐԱՄԻ	916 498 500,0	1 894 570,5	215 061 000,0	1 450 000,0	0,0	0,0
ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎՐԵԺ ՎԱՐԱՆՅՈՎԻ	791 643 928,6	1 636 473,2	3 058 000,0	919 464,0	603 937,0	3 700 871,0
ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ ԳԱՐՄԵՆԻ	729 625 000,0	1 508 268,7	4 000 000,0	1 500 000,0	0,0	0,0

2012-2015թթ. դրամական միջոցների փոփոխությամբ նույնպես առաջատարը մեծամասնական պատգամավորներն են: 5-րդ գումարման Ազգային ժողովի գործունեության 4 տարիների ընթացքում ամենաշատը՝ 2,7 մլն դոլարով, աճել են Աշոտ Արսենյանի դրամական միջոցները: 2012 թ. սկզբին նա հայտարարագրել է 1,5 մլն դոլարին, 2015-ի վերջին՝ 4,2 մլն դոլարին համարժեք դրամական միջոցներ:

Վրեժ Մարկոսյանի դրամական միջոցներն աճել են 1,6 մլն, Մուրադ Գուլոյանինը՝ 1,18 մլն դոլարով:

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Փոփոխություն	2015թ վերջի դրությամբ	2012թ սկզբի դրությամբ
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՇՈՏ ԵՂԻՇԵԻ	2 742 908,9	4 206 718,3	1 463 809,4
ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎՐԵԺ ՎԱՐԱՆՑՈՎԻ	1 636 473,2	1 636 473,2	0,0
ԳՈՒԼՈՅԱՆ ՄՈՒՐԱԴ ԱՐԱՄԻ	1 182 412,0	1 894 570,5	712 158,5
ՍԵՂՐԱՎԿՅԱՆ ՄՅԵՐ ԴԱՎԹԻ	844 546,0	1 033 591,7	189 045,7
ՆՈՒՇԻԿՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԳԱԳԻԿԻ	710 815,6	710 815,6	0,0

Ամենաշատը՝ 23,1 մլն դոլարով, նվազել են Գագիկ Ծառուկյանի դրամական միջոցները: 2012-ի սկզբին նա հայտարարագրել է 57,5 մլն, 2015-ի վերջին՝ 34,4 մլն դոլար: Ընդ որում, Գագիկ Ծառուկյանի դրամական միջոցների նվազումը արձանագրվել է 2015 թվականի ընթացքում (2015-ի սկզբին նա հայտարարագրել է շուրջ 134 մլն դոլարին համարժեք դրամական միջոցներ):



Բացակայություններ

5-րդ գումարման ընթացքում ամենաշատ բացակայած պատգամավորների տասնյակը գլխավորել է մեծամասնական ընտրակարգով ընտրված Գագիկ Ծառուկյանը:

Գումարման 9 նստաշրջաններից Գագիկ Ծառուկյանը մասնակցել է միայն երրորդ նստաշրջանի երկու նիստերին՝ 2013թ. մարտի 20-ին և հունիսի 10-ին: 8 նստաշրջանի որևէ նիստի չի մասնակցել, բացակայել է կայացած 887 քվեարկություններից 875-ից:

Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներից բացակայությունների թվով երկրորդն Աշոտ Աղաբաբյանն է (33 ընտրատարածք)՝ 469 բացակայություն, երրորդը՝ Կարեն Կարապետյանը (32 ընտրատարածք)՝ 335 բացակայություն:

Մեծամասնական ընտրակարգի ազդեցությունը պառլամենտի արդյունավետության վրա

Մեծամասնական ընտրակարգով ընտրված ԱԺ պատգամավորների արդյունավետության չափորոշիչն այն ազդեցությունն է, որ նրանք ունեն խորհրդարանի օրենսդրական, վերահսկողական և ներկայացուցչական գործառույթների իրականացման վրա:

Ժողովրդավարական կայացած ինստիտուտներ ունեցող երկրներում մեծամասնական ընտրակարգի առավելությունը խորհրդարանում հանրային լայն շրջանակների շահերի ներկայացվածության, ընտրողների հետ ուղիղ կապի ապահովումն է: Հայաստանյան քաղաքական, կուսակցական և ընտրական համակարգերի առանձնահատկությունները, սակայն, ձևափոխել են մեծամասնական ընտրակարգի ներկայացուցչական նշանակությունը՝ այս ինստիտուտին վերապահելով այլ նշանակություն և գործառույթ:

Հայաստանյան պառլամենտարիզմի առանձնահատկություններից մեկն այն է, որ մեծամասնական ընտրակարգը խորհրդարանում ապահովում է հատկապես քաղաքական իշխանության և իշխանամերձ գործարար էլիտայի ներկայացվածությունը:

Փաստը, որ 5-րդ գումարման Ազգային ժողովում 41 պատգամավորից 30-ը «Հանրապետական», իսկ 8-ը ԲՀԿ խմբակցության անդամ են, հերքում է այն պնդումը, թե մեծամասնական ընտրակարգի միջոցով ապահովվում է անկուսակցական կամ ընտրություններին մասնակից կուսակցություններին մերժող ընտրազանգվածի, նրա շահերի ներկայացվածությունը խորհրդարանում: 2012թ. խորհրդարանական ընտրություններն արձանագրել են մեծամասնական ընտրակարգի գրեթե ամբողջական «յուրացում» խորհրդարանական 2 խմբակցությունների կողմից. ԱԺ 6 խմբակցություններից 4-ը մեծամասնական ընտրակարգով ընտրված որևէ պատգամավոր չունի, իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների մոտ 70%-ը, ներկայացնում է իշխող ՀՀԿ-ն:

Հատկանշական է, որ «լուռ» մեծամասնականների թիվը գրեթե նույնությամբ համապատասխանում է օրինաստեղծ գործունեությունից օտարված պատգամավորների թվին՝ (23-25): Սա նշանակում է, որ գործնականում մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների գրեթե կեսը կամ ողջ խորհրդարանի մոտ 1/6-ն իր գործառույթը կամ պարտականությունը համարում է բացառապես քվեարկություններին մասնակցելը:

Նախընտրական ծրագրեր, խոստումներ և իրականություն

Ընտրողներին ինչ են խոստացել մեծամասնական ընտրակարգով 2012-ին խորհրդարան եկած պատգամավորները, որ հարցերն են կարևորել նախընտրական ծրագրերում, ինչպես են կատարել իրենց խոստումները:

Ծրագրային առաջնահերթությունների դիտարկումն ու վերլուծությունը կատարվել է երկու զուգահեռ ուղղություններով՝ նախընտրական բուկլետների ուսումնասիրություն և հարցազրույցներ մեծամասնական պատգամավորների հետ: Երկու դեպքում էլ դիտարկումներն ընդգրկել են խորհրդարանի մեծամասնական հատվածի ոչ ամբողջական կազմը: Սեփական ծրագրերի, անելիքների և ընդհանրապես սեփական գործունեության մասին չի ցանկացել խոսել 5-րդ գումարման ԱԺ մեծամասնական ընտրակարգով ընտրվածների գրեթե կեսը (հարցազրույցներ վարվել են 41 մեծամասնական պատգամավորներից 20-ի հետ): Գրեթե նույն պատկերն է արձանագրել նաև նախընտրական բուկլետների ուսումնասիրությունը. հաջողվել է ձեռք բերել 41 մեծամասնականների հազիվ կեսի ծրագրերը, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք ժամանակին նախընտրական բուկլետներ կամ չեն ունեցել, կամ դրանց առկայությունը չեն կարևորել, կամ ուղղակի ցանկալի չեն համարում դրանց անդրադառնալ:

Նախընտրական ծրագրեր, ծրագրային առաջնահերթություններ

Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների նախընտրական ծրագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել մի շարք ընդհանրացումներ:

- Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների նախընտրական ծրագրերը բովանդակությամբ և ինդիքների ընդգրկմամբ գրեթե չեն տարբերվում կուսակցությունների նախընտրական ծրագրերից, երբեմն նույնիսկ պատճենահանված լինելու տպավորություն են ստեղծում: Հարցազրույցներում պատգամավորներից մի քանիսը նշել են այդ մասին որպես միանգամայն տրամաբանական իրողություն կամ որպես առավելություն՝ «իմ ծրագիրը բխում է իմ կուսակցության ծրագրից», «մասն է» կամ «համապատասխանում է իմ կուսակցության ծրագրին» և նմանատիպ հայտարարություններով են մեծամասնական պատգամավորները բացատրում սեփական և կուսակցական ծրագրերի նմանությունը:

- Որոշ ծրագրեր կարող էին փոքրիկ լրացումներով նախագահի թեկնածուի նախընտրական ծրագիր դառնալ: Օրինակ՝ մեծամասնական պատգամավորներից մեկը՝ թիվ 32 ընտրատարածքից ընտրված Կարեն Կարապետյանը, խոստանում է «նպաստել ժողովրդավարության լիարժեք հաստատմանն ու քաղաքացիական հասարակության կայացմանը ... բոլոր ոլորտներում պատասխանատվության զգացման խորացմանը ... տնտեսության մեջ հավասար մրցակցային պայմանների ապահովմանը, միջին և փոքր բիզնեսի զարգացման երաշխիքների ստեղծմանը, ներդրումային դաշտի առողջացմանը, սոցիալական անհավասարությունն ծնող պատճառների վերացմանը, կենսաթոշակների շարունակական բարձրացմանը, սոցիալապես անապահով խավերի համար անվճար, նաև բարձագույն կրթության ապահովմանը» և այլն: Թիվ 8 ընտրատարածքից ընտրված Կորյուն Նահապետյանը առաջնահերթություն է համարում «դատաիրավական ոլորտի բարեփոխումները, գործարար միջավայրի, հարկային և մաքսային համակարգի բարելավումը, կրթության արդիականացումը և գիտության զարգացումը, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտների կատարելագործումը, հավասար մրցակցային պայմանների ապահովումը, սոցիալական ծառայությունների որակի բարելավումը, կենսաթոշակների և սոցիալական օգնության չափերի ավելացումը...»: Թիվ 17 ընտրատարածքից ընտրված Կարինե Պողոսյանի խոստումները «բնակչության կենսապայմանների բարելավման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության նվազեցման» մասին են:
- Ծրագրային խոստումների մի մասը գյուղապետի, թաղապետի կամ քաղաքապետի ընտրապայքար է հիշեցնում: Ահա նախընտրական ծրագրերի այս խմբում ներկայացված առաջնահերթությունների ցանկը՝ դասակարգված ըստ կրկնվելու հաճախականության.

- ասֆալտապատում, համայնքային ճանապարհների նորոգում
- դպրոցների, մանկապարտեզների վերանորոգում
- ջրամատակարարման բարելավում, ոռոգման և խմելու ջրագծերի նորոգում
- հարթ տանիքների նորոգում
- կոյուղային համակարգի նորոգում
- վթարային շենքերի վերականգնում
- թաղամասի բարեկարգում
- անապահով ընտանիքների ուսանող երեխաներին կրթական աջակցություն
- գազիֆիկացում

- Կան նախընտրական ծրագրեր, որոնցում միահյուսվել են նախագահական և թաղապետական նկրտումները: Դրանցում աղբատության կրճատման և աշխատատեղերի ավելացման մասին խոստմանը կարող է հաջորդել իրականացման ավելի մեծ «պոտենցիալ» ունեցող ասֆալտապատման կամ ջրագծերի նորոգման խոստումը: Վերջինը գործունեության հենց այն հարթությունն է, որտեղ մեծամասնական պատգամավորներն իրենց ավելի ինքնավստահ են զգում: Նրանք ոչ միայն մեզ հետ զրույցներում են գոհունակությամբ նշել այդ տիրույթում արվածը որպես պատգամավորական գործունեության արդյունք, այլ նաև անկեղծորեն հավակնում են իրենց ընտրողներին ներկայանալ ոչ այնքան պարզապես պատգամավորի, որքան պատգամավոր-բարերարի կերպարով:
- Ուշագրավ է, որ բանավոր զրույցներում մեծամասնական պատգամավորներն իրենց ծրագրային առաջնահերթություններն ավելի զուսպ և համեստ են ներկայացրել: Շատ խնդիրներ, որոնք որպես ծրագրային առաջնահերթություն կարևորվել էին նախընտրական բուկլետներում, պարզապես տեղ չեն գտել բանավոր զրույցներում ներկայացված առաջնահերթությունների ցանկերում: Պատգամավորները կամ մոռացել են դրանց մասին, կամ գիտակցաբար նախընտրել են լռել, որպեսզի դրանց իրականացման ուղղությամբ կատարված քայլերի վերաբերյալ հարցեր չառաջանան:

Ամփոփելով մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների նախընտրական ծրագրերի մեր դիտարկումները, պետք է արձանագրել, որ

- դրանք նույնպես, ինչպես քաղաքական կուսակցությունների նախընտրական ծրագրերը, հիմնականում վերացական են, հռչակագրային, գուրկ հստակությունից,
- դրանցում չեն մատնանշվում, թե ինչպիսի պատկերացումներ ունեն պատգամավորական մանդատի հավակնորդներն այս կամ այն խնդրի լուծման վերաբերյալ,
- չափազանց ընդգրկուն են, մեկ մարդու գործունեության տիրույթում տեղավորվելու առումով առնվազն վիճահարույց,
- դրանց մեծ մասում հաշվի չեն առնված օրենսդիր մարմնի ներկայացուցչի գործունեության բնույթը, իրավասությունների և պարտականությունների շրջանակը,
- հաճախ նույնացվում են կուսակցությունների ծրագրերի հետ, ինչը փոշիացնում է դրանց իրագործման համար անձնական պատասխանատվությունը՝ «իմ ծրագրերն իրականացվել են այնքանով, որքանով իրականացվել են իմ կուսակցության ծրագրերը» արդարացում-կարգախոսի ներքո:

Նախընտրական խոստումներ և իրականացում

Որքանով են մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները կարողացել իրականացնել իրենց նախընտրական խոստումները, ինչ քայլեր են հասցրել կատարել 4 տարվա ընթացքում: Յարգը դիտարկվել է հետևյալ կտրվածքներով՝

- ինչ են ասում իրենք՝ պատգամավորները, իրենց կատարած աշխատանքի մասին և ինչպես են գնահատում սեփական ծրագրերի իրականացումը,
- ինչ են ասում տեղերում գործող հասարակական կազմակերպությունները, և ինչպես են նրանք գնահատում տվյալ ընտրատարածքից ընտրված պատգամավորի գործունեությունը,
- ինչի մասին է վկայում 5-րդ գումարման Ազգային ժողովի օրենսդրական նախաձեռնությունների վիճակագրությունը:

5-րդ գումարման Ազգային ժողովի մեծամասնական հատվածի ներկայացուցիչները մեզ հետ զրույցներում իրենց ծրագրային խոստումների կատարման մասին խոսելիս շեշտադրումներն առավելապես կատարել են (եզակի բացառություններով) ոչ օրենսդրական խնդիրների վրա: Մեծամասնականները 4 տարվա ընթացքում կատարած աշխատանքներից առանձնացրել են այսպիսի խնդիրներ՝

- «Ամենամեծ աշխատանքը, որ իրականացրել եմ, 2015թ.բյուջեի միջոցներով Արտաշատ քաղաքում մեծ փողոցի 120 միլիոն դրամ արժողությամբ ասֆալտապտուժա էր» (Կարինե Պողոսյան, թիվ 17 ընտրատարածք),
- «Վերին Կարմիրաղբյուր գյուղի ջրամատակարարման և մանկապարտեզի հետ կապված խնդիր կար: Մանկապարտեզն ամբողջությամբ վերանորոգվեց: Թեղուտ գյուղի մանկապարտեզի համար երեք տարի պայքարեցի, և հարցը լուծվեց» (Յակոբ Յակոբյան, թիվ 41 ընտրատարածք),
- «Թիվ 24 ընտրատարածքում կատարվել են դպրոցների շինարարության, ճանապարհների վերանորոգման, ոռոգման և խմելու ջրի անցկացման բավականին ծրագրեր» (Յակոբ Յակոբյան, թիվ 24 ընտրատարածք),
- «Գավառ քաղաքում լայն թափով ճանապարհաշինություն է իրականացվում: Նույն Գավառում և գյուղերում դպրոցաշինության աշխատանքներ են կատարվել, ջրատարեր ու տանիքներ վերանորոգվել» (Մանվել Բաղդեյան, թիվ 22 ընտրատարածք),

- «թիվ 14 ընտրատարածքի գյուղերում ասֆալտապատում է արվել, համայնքային գրասենյակների կառուցում է եղել, դպրոց է վերանորոգվել: Պլյուս դրան՝ իմ անձնական ներդրումները, բազմաթիվ բաներ արել եմ, գազաֆիկացում ենք արել» (Վրեժ Մարկոսյան, թիվ 14 ընտրատարածք),
- «այս տարի ինձ հաջողվեց Գյումրու երկու թաղամասի փողոցները բարեկարգելու համար ֆինանսական միջոցներ գտնել: Նախագահը հանդիպման ժամանակ խոստացել է աջակցել ու համապատասխան միջոցներ տրամադրել: Հիմա Գյումրիում երկու փողոցներ ենք բարեկարգում: Կա նաև մի կարևոր՝ կոյուղատար համակարգի խնդիրը, որին առնչվել ենք փողոցների բարեկարգման ժամանակ» (Մարտուն Գրիգորյան, թիվ 34 ընտրատարածք):

Օրենսդրական գործունեությանը պատգամավորների ճնշող մեծամասնության «կատարողականներում» աննշան տեղ է հատկացվում: 5-րդ գումարման Ազգային ժողովի օրենսդրական նախաձեռնությունների փաստագրությունը վկայում է, որ մեծամասնական ընտրակարգով ընտրված 41 պատգամավորներից միայն 18-ն է հանդես եկել օրենսդրական նախաձեռնություններով: Հիմնականում՝ համահեղինակությամբ, միայն 2 պատգամավոր է միայնակ օրենքի նախագիծ հեղինակել:

Առաջինը թիվ 30 ընտրատարածքից ընտրված պատգամավոր Էդմոն Մարությանն է, ով նաև վիճակագրական բոլոր ցուցանիշներով 5-րդ գումարման խորհրդարանի ամենակտիվ մեծամասնականն է: Նա հեղինակ կամ համահեղինակ է երեք տասնյակից ավելի օրենսդրական նախաձեռնությունների: Նա նաև միակն է 41 մեծամասնականների մեջ, ում օրենսդրական գործունեությունը համապատասխանում է նախընտրական խոստումներին՝ «լինել պրոֆեսիոնալ պատգամավոր, աշխատել քրեական արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության իրավակարգավորումների տիրույթում»: Նրա հեղինակած օրինագծերը վերաբերում են այդ ոլորտներին:

Երկրորդը, ով միայնակ օրենքի նախագիծ է հեղինակել, թիվ 24 ընտրատարածքի պատգամավոր Հակոբ Հակոբյանն է: «Աժ մոնիտորինգի» հետ զրույցում նա չի հիշատակել այդ մասին, փոխարենը կարևորել է «ընտրատարածքում դպրոցների շինարարության, ճանապարհների վերանորոգման, ոռոգման և խմելու ջրի անցկացման» ծրագրերի իրականացումը՝ որպես իր և ՀՀԿ-ի ծրագրերի իրականացում:

Մյուս մեծամասնական պատգամավորները, որոնք խորհրդարանում այս կամ այն չափով մասնակցել են օրինաստեղծ գործընթացին, իրենց գործունեության արդյունքների մասին Նախընտրել են խոսել ընդհանուր ու անորոշ ձևակերպումներով:

Նախընտրական ծրագրեր, խոստումներ և իրականացում կտրվածքով պատգամավորների գործունեության արդյունավետությունը գնահատելիս վիճակը փակուղային է բոլոր այն դեպքերում, երբ ունենք «բարելավել», «նպաստել», «ավելացնել», «նվազեցնել», «մեծացնել», «կրճատել»... բայեր՝ համեմատության մի կողմում և ընդամենը «ժողովրդամետ քվեարկություն»՝ մյուսում:

Դժվար է չափել արվածի համապատասխանությունը կամ համարժեքությունը տրված խոստմանը այն դեպքում, երբ, օրինակ, կրթության որակի բարելավում խոստացած պատգամավորը՝ Կարինե Պողոսյանը (թիվ 17 ընտրատարածք), որպես այդ խոստման իրականացում նշում է, թե օգնել է, որ իր տարածքի բոլոր դպրոցների աշխարհագրության դասասենյակները հայերեն գլոբուսներով ապահովվեն: Գինեգործության և կոնյակագործության ընտանեկան բիզնես ունեցող պատգամավորը՝ Ալեքսան Պետրոսյանը (թիվ 21 ընտրատարածք), ասում է, որ իրեն «հաջողվել է հարթել այն կնճռոտ օրենքները, որոնք վաս էին բերում Հայաստանի գյուղատնտեսությանը, կոնյակագործությանն ու գինեգործությանը»: Այդ «հարթեցման» արդյունքում Հայաստանում հնարավոր է դարձել ոչ շշպղված գինի վաճառել՝ խուսափելով ակցիզային հարկից, ինչը պատգամավորը մեծ հաջողություն է համարում գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից:

Նախընտրական խոստումների իրականացման պատկերն առավել ամբողջական դարձնելու նպատակով «ԱԺ մոնիտորինգը» դիմել է նաև մարզային ՀԿ-ներին: Մեր խնդրանքով մարզերում գործող հասարակական կազմակերպությունները տեղեկատվություն են տրամադրել այն մասին, թե ինչ են արել պատգամավորներն իրենց ընտրատարածքներում, որքանով են իրականացրել իրենց Նախընտրական խոստումները, և ընդհանրապես՝ ընտրողներն ինչպես են գնահատում իրենց կողմից ընտրված պատգամավորի գործունեությունը: Մեր կողմից մշակված և քաղաքացիական տարբեր կառույցների կողմից լրացված հարցաշարերը ներառել են այս հարցերի պատասխանները մեծամասնական ընտրակարգով մանդատ ստացած պատգամավորների հիմնական մասի վերաբերյալ:

ՀԿ-ներից ստացված պատասխանները գրեթե կրկնում են իրար՝ արձանագրելով հիմնական միտումները.

- ընտրողները չեն հիշում իրենց պատգամավորի տված խոստումները, չեն կարող ասել, թե որքանով են դրանք իրականացվել,
- տեղյակ չեն իրենց պատգամավորի օրենսդրական գործունեությունից,
- 2012-ի ընտրություններից հետո պատգամավորները որևէ հանդիպում չեն կազմակերպել իրենց ընտրողների հետ՝ լավագույն դեպքերում բավարարվելով նեղ շրջանակում ոչ ֆորմալ բնույթի բակային շփումներով,
- տեղերում միանշանակորեն չի ընկալվում այն հարցի պատասխանը, թե ում ջանքերով կամ շնորհիվ են իրականացվել ասֆալտապատման կամ տանիքների նորոգման կամ այդ բնույթի այլ աշխատանքները. ոմանք հակված են դրանք վերագրել իրենց պատգամավորին, ոմանք՝ թաղապետին կամ գյուղապետին, ոմանք էլ՝ կառավարությանը կամ նույնիսկ նախագահին:

2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովն այսուհետ կընտրվի միայն համամասնական ընտրակարգով. դե յուրե մեծամասնական ընտրակարգն այլևս չի գործի և պատգամավորական մանդատները կտրվեն միայն կուսակցական ցուցակներով ընտրված թեկնածուներին: Իսկ 2016թ. հունիսին ընդունված Ընտրական օրենսգրքի 77-րդ հոդվածով սահմանվում է, որ չնայած ԱԺ ընտրություններն անցկացվում են հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից, սակայն կուսակցությունները ներկայացնում են համապետական և տարածքային ընտրական ցուցակներ: Սա նշանակում է, որ պատգամավորների մի մասը 2017թ. խորհրդարանական ընտրություններից հետո Ազգային ժողով է գալու կոնկրետ տարածքների ընտրողների քվեարկության շնորհիվ, ինչը միաժամանակ համարվելու է նաև քվեարկություն այդ թեկնածուներին առաջադրած կուսակցությունների օգտին:

Փաստացի ստեղծվել է մեխանիզմ, որն ինչպես նախկինում հիմնվում է առանձին անհատների միջև մրցակցության սկզբունքի վրա: Ըստ եուլայան, համամասնական ընտրակարգի ներքո պահպանվել է մեծամասնական ընտրակարգը, հետևաբար կարելի է արձանագրել, որ հաջորդ ընտրությունների ժամանակ բովանդակային առումով կրկին գործ ենք ունենալու խառը ընտրակարգի հետ: Այն տարբերությամբ միայն, որ եթե նախկինում անհատ թեկնածուները կարող էին մեծամասնական ընտրակարգով առաջադրվել հասարակական նախաձեռնությամբ, նոր Ընտրական օրենսգրքով առաջադրման իրավունքը բացառապես կուսակցություններին է, որոնք սահմանափակված չեն տարածքային ցուցակներով առաջադրել նաև անկուսակցական թեկնածուների: Այս համակցությունը, մի կողմից, մեծացնում է պատգամավոր դառնալու ցանկություն և կարողություն ունեցող անհատների կախվածությունը կուսակցություններից, մյուս կողմից էլ՝ շահագրգռում կուսակցություններին տարածքային ցուցակներում ընդգրկելու այնպիսի անհատների, ովքեր ֆինանսական, մարդկային կամ այլ ռեսուրսներով կարող են նպաստել հնարավորինս շատ քվեարկողների մոբիլիզացմանը:

Տարածքային ընտրացուցակներով թեկնածուների առաջադրման մեխանիզմի ներդրումը հիմնավորվում է տարածքների և պատգամավորների միջև գործնական կապի պահպանման անհրաժեշտությամբ: «Աժ մոնիտորինգի» հետազոտության արդյունքները փաստում են ընտրող-մեծամասնական պատգամավոր կապի բացակայության կամ առնվազն անարդյունավետության մասին: Իսկ ձևավորված ավանդույթների, ընտրական գործընթացի նկատմամբ անվստահության պայմաններում այդ մեխանիզմը շարունակելու է մնալ քաղաքական մեծամասնության մեկնարկային մրցակցային առավելությունն ապահովող հիմնական միջոցը և ուղի է հարթելու մեծամասնական պատգամավորներից շատերի՝ կրկին խորհրդարան գալու համար: Ոչ թե հանրային վստահության, այլ ռեսուրսների վրա խարսխված ընտրական համակարգի պարագայում պառլամենտի որակի, քաղաքական կշռի բարձրացման հեռանկարները շարունակելու են մնալ խիստ մշուշոտ:

